

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՄՈ

ԽԱՐԱԶՅ ԱՆԸ

ՅԵՎ

ԿՈՒ ԱՆԿԱՅ

ԹԱՏՐՈՆԸ

B

2952

|| Apm.
|| 5-60a

B
2952

ԱՄՈՒ

ԽԱՐԱԶՅԱԼԸ

ՅԵՎ

ՆՐԱ ԱՆՎԱՆ


ԹԱՏՐՈՆԸ

ИHB-15660.

1898-1928-1938

B
2952

944



W. J. ...



ԱՄՈՒ-ԽԱՐԱԶՅԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆՎԱՆ ՊԵՏԵՐՋԻԿ ԹԱՏՐՈՆԸ

Խորհրդային Հայաստանի քառերական արվեստի և կուլտուրայի բարձրացման ու մասսայականացման ասպարիզում, անշուշտ, խոշոր դեր է խաղում հայ բեմի ականավոր գործիչ, Հանրապետության ժողովրդական արտիստ Ամո-խարազյանը:

90-ական թվականների ծանր ու մղձավանջային տարիներում, յերբ հայկական քառերակն ու դերասանական կոչումը հավասար չափով արհամարհվում էին ցարական-ժանդարմական կառավարության, բուրժուազիայի և սուր ծաղրի յենթարկվում ժամանակի ֆադեբնական տարրերի կողմից, ահա այդ դժվարին ու խեղդող պայմաններում, ետդեմ լով արհամարհանքի ու խավար նախապաշարումների քանձր քողը, ասպարեզ իջավ ընկ Ամո-խարազյանը:

Ծնվելով (1880 թ.) և սնվելով Թբիլիսիի ունևոր ընտանիքում, Ամո-խարազյանը բնավ չտարվեց իրեն համար անհատական, նյութապես ապահով կյանք ստեղծելու տենչանքով. նա արհամարհեց իր ժամանակի ֆադեբնական կարծիքը դերասանի մասին և ընտրեց այն ժամանակի հայ դերասանի անապահով, դրժվարին ու հալածական ասպարեզը:

Սակայն, Ամո-խարազյանի ծնողները չէին կարող հաշտվել այն մտքի հետ, վոր իրենց զավակը կարող է «ֆադեբնական» դառնալ, ուստի նրան այդ վտանգավոր մտքից վանելու նպատակով, ուղարկում են Մոսկվա բարձրագույն կրթություն ստանալու:

Բեմի խանդավառ սիրահար 17 տարեկան պատանուն դժվար է լինում հրաժարվել իր ընտրած ու սիրած ասպարեզից և նա փոխանակ համալսարանի համար պատրաստվելու, մտնում է այն ժամանակ Մոսկվայի Գեղարվեստական քառերակնի հիմնադիր, ականավոր գործիչ Նեմիրովիչ-Դանչենկոյի ֆիլիարմոնիան, վորտեղ ամբողջ 2 տարի նա ուսանում է քառերակն արվեստը:

Մոսկվան՝ Նեմիրովիչ-Դանչենկոյի գլխավորած ֆիլիարմոնիան, հանդիսացավ Ամո-խարազյանի քառերակն արվեստի ասպարեզում «մկրտվելու այն առաջին ավագանը»,

վորտեղ հիմնավոր կերպով սեփականացրին մինչ այդ հարազանի՝ քառերակն մասին ունեցած վոչ լրիվ հասկացողությունները: Մոսկվայում հաճախելով խոշոր քառերակն և տեսնելով բարձրորակ դերասանների խաղերը, Ամո-խարազյանն էլ ավելի մեծ սիրով է համակվում դեպի քառերակն, սակայն գրկվելով մինչ այդ իր հոր կողմից ցույց տրվող նյութական ոգնությունից, 1898 թ. հարկադրված է լինում բողնել Մոսկվան և վերադառնալ Թբիլիսի: Այդ թվականից ահա սկսվում է Ամո-խարազյանի յեռանդուն ու խանդավառ աշխատանքը քառերակն ասպարեզում:

Ամո-խարազյանը խիստ մեծ նշանակություն է տալիս քառերակնին. դեռ վաղ անցյալից նա քառերակնը համարել է լայն մասսաները դաստիարակելու հիմնական ազդակներից մեկը: Խարազյանն իր հասկացողություններով դեմ գնալով այն ժամանակի՝ «Արվեստը արվեստի համար» բուրժուական փտած գաղափարախոսության, գտնում է, վոր արվեստը պետք է լինի և ամբողջովին դառնա լայն մասսաների սեփականություն և ծառայի ու սպասարկի այդ նույն աշխատավորությանը:

Յեվ արվեստի մասին իր ունեցած այդ առողջ տեսակետը գործնականում իրականացնելու համար, նա առաջին հերթին ամուրթելերով կապվում է աշխատավորական լայն մասսաների հետ, խաղում է նրանց համար և քառերակն դաստիարակչական նշանակություն մասին լայն ազդեցության ծավալում ամենուրեք: Այդպիսով, ֆադեբնների հեռավոր ու հետամնաց բանվորական քաղաքները, ֆարրիկ-գործարանները, դպրոցները և շահագործող դասակարգերի կրունկների տակ հյուծվող գյուղը դառնում է Ամո-խարազյանի խանդավառ աշխատանքի ու ստեղծագործության հիմնական որջեկտը:

Նեմիրովիչ-Դանչենկոյի քառերակն շկոլան Ամո-խարազյանի մեջ ներարկել էր քառերակն աշխատողի լուրջ վորակ, սակայն դժբախտաբար, այդ շրջանում Թբիլիսին գուրկ էր դերասանական մշտական խմբից՝ բնականաբար և սեփական քառերակն շենքից:



40640-65
32248-63

Թբիլիսիում կենտրոնացած հայ բուրժուազիան գլանում էր դրամ բաց թողնել հայ թատրոնի համար: Սակայն թատերական գործի այդ ծանր պայմանները բնավ չեն ընկնում յերիտասարդ դերասանին և նա լավ իմանալով, վոր իր ընտրած ուղին վարդերով ու ծաղիկներով չի պատած, միաժամանակ գիտակցելով, վոր դժվարությունները հաղթահարելու համար հարկավոր է անխնայ ու անձնվեր աշխատանք, իր շուրջն է հավաքում մի խումբ յերիտասարդ բանվոր-սիրողների ու դերասանների և նետվում աշխատանքի ասպարեզ:

Ամո-հարագյանը Թբիլիսիի բանվորական թաղամասերում կազմակերպում է հանրամատչելի ներկայացումներ և իր խաղով կարն ժամանակամիջոցում կարողանում է շահել Թբիլիսիի աշխատավորության անհուն սերըն ու համակրանքը: Ամո-հարագյանը վաղ միայն բեմական լավ գործիչ է, այլև ոժտված է կազմակերպչական բացառիկ ընդունակություններով:

Նա, ով 900-ական թվականներին ապրել է Թբիլիսիում, չի կարող չհիշել կամ չիմանալ «Պոկրովսկի կազարմի» շենքում, Ավնայան աուդիտորիայում, Մուրաշկոյի, Հավլարարի և Զուբալովի անվան բանվորական թատրոններում Ամո-հարագյանի հիմնադրած ու կազմակերպած դերասանական խմբերի ներկայացումները:

Վորպես արտիստ նա կերտել է բազմաթիվ դերեր: Նրա լավագույն դերերն են՝ Ուրիել Ակոստա, Եդիպ արքա, Պետրոնիուս, Որբելո, Սվենգալի, Կորբադո: Ամո-հարագյանը այսօր էլ մեր ժամանակակից պիեսներումն է հանգես գալիս: Միշտ մեր հիշողության մեջ կմնան նրա Բերսենյեվը— «Բեկում»-ի մեջ, Յագորը— «Պատիվ» պիեսում և այլն:

Բացի բեմական ու հասարակական գործունեությունից, Ամո-հարագյանը թատերական-գրական գծով հանձնել է 100-ից ավելի կտոր թարգմանական, փոխադրական և ինքնուրույն գործ: Նա, որինակ, պիեսների յե վերածել Պուշկինի «Փոստակայանի տեսուչ»-ը, Պերն Պոռչյանի «Հացի խնդիր»-ը, Նիկ. Ոստրովսկու «Փոքորկածիներ»-ը, «Հատուցում» և այլն:

Առավելապես մեծ է Ամո-հարագյանի կատարած աշխատանքը հատկապես թատերական ստեղծագործական կադրերի պատրաստման ասպարեզում: Նա բազմաթիվ կադրեր է ավել հայ թատրոնին: Ամո-հարագյանը բեմ է բարձրացրել ժողովրդական դերասաններ ժամանակին, Ոլգա Գուլագյանին և շքանշանակիր Ավ. Ավետիսյանին, վաստակավոր ար-

տիստներ՝ Սյուզան Գարագաշին, Նինա Մանուչարյանին, Բագրատ Մուրադյանին, արվեստի վաստակավոր գործիչ՝ Արմեն Գուլյակյանին, ասմունքի վարպետ-արվեստի վաստակավոր գործիչ՝ Սուրեն Բոչարյանին և որիշ շատերին, վորոնք այժմ աշխատում են Հայկական, Վրացական և Ադրբեջանական հանրապետությունների կենտրոնական և շրջանային թատրոնների բեմերի վրա:

Խոշոր աշխատանք է տարել ընկ. Ամո-հարագյանը նաև Թբիլիսիի ուսանողության և աշակերտության մեջ:


1917 և 1918 թվականներին նա իր շուրջը համախմբելով թատերասեր յերիտասարդությանը, կազմակերպել է ուսանողա-աշակերտական դրամատիկ խումբ և ամբողջ յերկու տարի արիաբար պարապել է այդ խմբի հետ ու ղեկավարել այն: Յեվ այսօր արվեստի տարբեր ֆրոնտներում աշխատող այդ խմբի անդամներից շատերը մեծ յերախտագիտությամբ են հիշում նրան, վորն առաջին անգամ ներարկեց նրանց մեջ անհուն սեր դեպի թատերական արվեստը:

Ամո-հարագյանը միշտ էլ մտտ է յեղել կանգնած հեղափոխական գաղափարախոսությամբ զինված առաջավոր մարդկանց: 1918 թվին Թբիլիսիում կաշեգործների միության կից ստեղծվում է «Պրոլետկուլտ» սեկցիա (վորի նախագահն է հին բոլշևիկ Անուշավան Վարդանյանը), վորտեղ Ամո-հարագյանը 2 տարի շարունակ աշխատել է, վորպես այդ սեկցիայի թատերական բաժնի ղեկավար: Նա միշտ էլ վայելել է բանվորության և բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպության խոր համակրանքը:

Ամո-հարագյանին իր գիրկն է փաշել նաև նավթային Բագուն, վորտեղ նա միաժամանակ աշխատել է Բագվի «Մարդասիրական ընկերության» դրամատիկական խմբում, սակայն չկարողանալով տանել Բագվի բուրժուաների զազրելի, արհամարհական վերաբերմունքը դեպի դերասանի բարձր կոչումը, հեռանում է այդ խմբից և պանծալի բոլշևիկ Ստեփան Շահումյանի աջակցությամբ և խորհրդով հիմք է դնում Բալայանիի Նոբելի ակումբի բանվորական առաջին թատրոնին, վորտեղ աշխատում է մոտ 2 տարի:

Ամո-հարագյանը ցանկանալով մոտիկից ծանոթանալ յեվրոպական թատերական արվեստի կուլտուրայի ժառանգության պտուղներին, 1906 թվին մեկնում է Փարիզ: Նա 2 տարի մնում է Փարիզում:

Այդ ժամանակամիջոցում նա մասնակցում է հռչակավոր վոդրերգու Մյունե-Սյուլիի յեղ-



Ամո-հարագյան (22 տարեկան հասակում)

բոր՝ ականավոր քատերագետ պրոֆեսոր Փոլ-Մյունեյի պարապմունքներին: Խարագյանի վրա առանձնապես խոր ազդեցութիւն է բռնում հատկապես Անթուանի ռեալիստական քատրոնը: Այսպէս ծանոթանում է աշխարհա-հրոչակ այնպիսի քատերական խոշորագույն ուժերի հետ ինչպիսիք են՝ Սառա-Բեռնարը,



«Ուրիել-Ակոստա»

Մյունե-Սյուլին, Դը-Մաքսը, Կոկլենին և ուրիշները: Ամո-խարագյանը մեծ հաճույքով ու հոգեկան բարձր բավականութեամբ այցելում է նաև Փարիզի հեռու արվարձանների բանվորական քատրոնները և մոտիկից ծանոթանում նրանց աշխատանքներին:

1908 թ-վին Ամո-խարագյանին մեծ նորից հանդիպում ենք Թբիլիսիում:

Թատերական արվեստի աշխարհահռչակ վարպետներից գեղարվեստական մեծ լիցք ստացած յերիտասարդ Ամո-խարագյանը գալով Թբիլիսի, վորոշում է քաղաքի ամենախոշոր բանվորական քաղամասում՝ Հավլաբարում հիմն դնել կուլտուրական մեծ քատրոնի: Նա իր շուրջը համախմբելով քատրոնական գործը սիրող անկաշառ և նվիրված քատերասերներին ու դերասաններին, կարգի յե բերում Հավլաբարի (նախկին Արաբայանի) քատրոնը, վերացնում այնտեղ գոյութիւն ունեցող խալտուրան և անկարգութիւնները, հիմն դնում «Նոր դրամա» դերասանական խմբի:

Թբիլիսիի Սոլովակի նարպակալած բուրժուազիան սկսում է հեզնանքով նայել Ամո-խարագյանի ձեռնարկումներին և հայտարարել, վոր բանվորական քատրոնը մի քանի ամսից հետո հողս կցնդի: Այդ քատրոնի քշնամիները վոչ մի միջոցի առաջ կանգ չեն առ-

նում վարկաբեկելու քատրոնը և նրա դեկավարին: Սակայն Ամո-խարագյանը, քատրոնի գործին նվիրված լավագույն բանվոր-սիրողների և դերասանների ոգնութեամբ կարողանում է 5 տարի շարունակ ամենադժվարին պայմաններում պահել այդ քատրոնը, մինչև վոր 1914 թ-վին անկարող լինելով վնարել քատրոնի վրա կուտակված պարտքերը, փակվում է այդ քատրոնը, դրա հետ կազմալուծվում է նաև «Նոր դրամա» խումբը և Ամո-խարագյանը դերասանական մի փոքրիկ խմբով այդ տարվա ձմեռվա սեզոնն անց է կացնում Լեհիսկանում, վորից հետո նա կրկին վերադառնում է Թբիլիսի: Այս անգամ Թբիլիսիում նա աշխատում է, վորպէս Զուբայովի անվան բանվորական քատրոնի հայ դրամատիկական սեկցիայի ռեժիսոր և դերասան: 3 տարի շարունակ աշխատելով այդտեղ, Խարագյանը նոր քափ ու յեռանդ է տալիս գործին, հայ դրամատիկական սեկցիայի շուրջը համախմբելով աշխատավորական տարբեր խավի զանգվածներին:

1919-20 թ-վականը անվերջ մաքառումների մի ժամանակաշրջան է դառնում Ամո-խարագյանի համար, ընդդեմ հայ բուրժուանացիոնալիստական, դաշնակցական տարրերի,



«Բուրք և յեղալք»

վորոնք ամեն կերպ աշխատում են խափանել ու յեղդել բանվորական քատրոնի կազմակերպման շուրջն ունեցած լավագույն մարդկանց մտահոգումները:

Այդ շրջանում Թբիլիսիում գործող Հայ Դրամատիկական ընկերութեան վարչութիւնը և դրամատիկ քատրոնը գտնվում էին գլխավոր-

բայես բարձրագիայի ձեռնում: Ամո-հարազանը, հայ ժողովրդական քատրոնի խանդավառ և անկուն աշխատողը, նորից պայ-
 ֆարի ասպարեզ է յեկնում:

Ամո-հարազանը այդ շրջանում հանդի-
 սանում է Թբիլիսիի հայ դերասանական միու-
 քյան վարչության փոխ նախագահն ու գան-
 ձապահը: Նա 1918-19 թ. թ. քատերական սե-
 զոնում գլխավորում է Դրամատիկական ընկե-
 րության վարչության բարձր անդամների
 կողմից քատրոնի դերասաններին առաջա-
 դրած ծանր պայմանների շուրջը առաջացած
 բողոքները, կազմակերպում է դերասանների
 գործադուլ և այդ ձևով հաղթահարելով իր
 հակառակորդներին, կարողանում է հաջողու-
 քյամբ փակել դրամատիկական քատրոնի այդ
 տարվա սեզոնը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հե-
 դափոխության ազատարար ալիքները վաղուց
 արդեն քափանցել էին Անդրկովկասի խոր-
 քերը:



«Պատիվ» — Յագոբ

Հայաստանի ապստամբ բանվորների և
 գյուղացիների կամֆով ու ռուս ֆաջարի կար-
 մի բանակի ոգևորչամբ, բուշեիկներին մեծ
 կուսակցության ղեկավարությամբ, մենչևիկ-
 ների գաղափարական դաշնակից՝ հակահեղա-
 փոխական դաշնակների իշխանությունը ռա-
 պաված էր յերկրում: Հայաստանում գործում
 էր առաջին հեղկումը:

1921 թվի հունվար ամիսն էր Թբիլիսիում:
 Հավարարի աշխատավորությունը մեծ
 վոզեվորությամբ նշում էր հայ բեմի գործիչ
 և ժողովրդի սիրելի դերասանուհի տիկին Զա-
 քելի բեմական գործունեության 30-ամյակը:

Ամենուրեք գործում էր մենչևիկյան ա-
 գեևտուրան:

Հայ բեմի մշակը ստանում էր իր բարո-
 յական գնահատականը, վոզույնի ջերմ նա-
 րերով բուրբ շնորհավերում էին նրան:



«Փոքորկածիներ» — Մայելսկի

Բեմի վրա յե ահա քատրոնի իրգախ գոր-
 ծիչ Ամո-հարազանը: Նա իր նառում վեր հա-
 նելով Զաքելի անցած դժվարին ու պատվա-
 վոր ուղին, իր նառը վեր է ածում ֆաղաֆա-



«Պատիվ» — Յագոբ

կան յելույթի, ընդդեմ վրաստանի մենչևիկ-
 յան իշխանության և բարձր ճայնով ի լուր
 ամենի հայտարարում: — Ընկերներ, Հայաս-
 տանը խորհրդայնացել է և այժմ նա մեզ կաչ
 է անում ընթանալ իր ուղիով, վորովետե

նրա ընտրած ուղին, դա խորհրդային ուղին
 է, ամենահիշտ ուղին աշխարհում:

Հորելյանին ներկա յեղող աշխատավորու-
 քյունը ծափահարում է համարձակ նառախո-
 սին, իսկ բուրժուա-նացիոնալիստական տար-



«Հյուրանոցի տիրուհին» — կավայեր

բերի դեմքերը թքվում են, սկսվում է հետա-
 խուզական արպտումներ Ամոյի դեմ, վորից
 հետո Ամոյին մեմ հանդիպում են Զալալոդ-
 յում (այժմ Ստեփանավան), իսկ հետո Ղարա-
 ֆիլիսայում (այժմ Կիրովական), վորտեղ նա,



«Փոստակայանի տեսուչը»

Կիրովականի առաջին հեղկումի հանձնարարու-
 քյամբ, իբրև քատերական գործի ղեկավար
 սկսում է ներկայացումներ կազմակերպել Կի-
 րովականի շրջանի գյուղերում:

Մեծ է Ամո-հարազանի կատարած աշ-
 խատանքը հատկապես Հայաստանի ֆաղա-
 ֆացիական կոիվների շրջանում, յերբ հեղա-
 փոխական գաղափարներով տոգորված Ամո-
 հարազանը, դաշնակների դեմ ապստամբած
 գյուղերում կազմակերպում է իր իսկ ձեռնով
 գրած հեղափոխական ինսցեմիրովկաների ու
 պատկերների ներկայացումներ և քատրոնի
 հանդիսատես աշխատավորությանը հորդորում
 է յերկրի սահմաններից դուրս վոնդել դաշ-
 նակ-մաուզերիստների վերջին մնացորդներին:

Ամո-հարազանը յերկար չի մնում Կիրո-
 վականում: Նա 1921 թ. աշնանը Հայաստանի
 Լուսժողկոմատի հրավերով, մի խումբ դերա-
 սաններով գալիս է Յերևան և սկսում է ներ-
 կայացումներ կազմակերպել Պետական քատ-
 րոնում և կարմիր Բանակի տանը, վորից հետո
 նա հիմնում է Հայաստանի առաջին շրջիկ
 քատրոնը և անցնում է շրջաններ ու ներկա-
 յացումներով սկսում սպասարկել գյուղական
 աշխատավորական լայն մասսաներին, մինչև
 վոր շրջիկ քատրոնը 1928 թ. պետականաց-
 վում է ու ինքը մինչև հիմա մնում է նրա դե-
 կավարը:

* *

Պետական շրջիկ քատրոնի առկայությունը
 մեր իրականության մեջ, դա կուլտուրական
 մի խոշոր նվանում է, վորը խոշոր դաստիա-
 րակչական աշխատանքներ է ծավալում մեր
 հանրապետության շրջաններում՝ խորհրդային
 քատերական արվեստը հասցնելով ամենահե-
 ռավոր գյուղերն ու ավանները:

Այժմ, յերբ մեր հասարակությունը Ամո-
 հարազանի բեմական գործունեության 40-
 ամյա հորելյանի հետ տոնում է նաև նրա
 հիմնադրած Պետական շրջիկ քատրոնի գո-
 յության 10-ամյակը, արժե մի համառոտ ակ-
 նարկ ձգել այդ քատրոնի գործունեության
 վրա:

Պետական շրջիկ քատրոնը — դա լոկ դե-
 րասանական մի խումբ չէ, այլ կատարյալ մի
 շրջիկ դպրոց, վորն իր հետ գյուղ է տանում
 սոցիալիստական արվեստն ու կուլտուրան:
 Թատրոնի գործունեության սկզբնական տա-
 րիներում, յերբ դեռ նա չէր պետականացվել,
 կային շատ արգելակող պայմաններ: Ամենա-



«Պատիվ» — Յագոբ

մեծ դժվարությունը վոր անցյալում գգաց-
 վում էր, գյուղական պայմաններին համապա-
 տասխանող հեղափոխական պիեսների բացա-
 կայությունն էր: Այդ բացը լրացնելու ռա-
 մար, խմբի ղեկավար Ամո-հարազանն ինքն

եր գրում գանազան ինսցենիքովկաներ ու ներկայացնում գյուղական բեմերի վրա:

Չկա Հայաստանում մի շրջան, ուր մուտք գործած չլինի Պետական Երջիկ թատրոնը:

Ամո-հարազյանի անվան Պետական Երջիկ թատրոնն իր 10-ամյա գոյության ընթացքում 828 ներկայացում է տվել շրջանային կենտրոններում, 655 ներկայացում գյուղերում, 388՝ բանվորական վայրերում, 43՝ զինվորական մասերում և 77 ներկայացում դպրոցներում: Նշված բոլոր վայրերում նա տվել է



Մի խումբ անվանի դերասաններ, վորոնք բեմական գործունեությունը սկսել են Ամո-հարազյանի մոտ:

1991 ներկայացում, վորոնց այցելել են 530,000 հանդիսատեսներ:

Պետական շրջիկ թատրոնի ռեպերտուարը կազմված է գերազանցապես ինֆնուրույն և թարգմանական հեղափոխական պիեսներից, վորտեղ դրսևվորվում է սոցիալիզմի յերկրի մարդ-հաղափացին:

Պետք է անպայմանորեն նշել, վոր գյուղի վերակառուցման և կոլտնտեսային շինարարության բնագավառում Պետական շրջիկ թատրոնը հանդիսացել է մեր աշխատավորության կենդանի ագիտատորներից մեկը, վորը ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան հասցնում է մինչև գյուղական հեռավոր խրհիքները:

Ուշագրավ է նաև մեր շրջանային մամուլի գնահատականը Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ թատրոնի մասին, վորից մի քանի մեջբերումներ ենք անում այստեղ:

Ա.ՊԱՐԱՆԻ «ԱՆԱՍՆԱՊԱՀ ԿՈՒՆՈՋՆԻԿ» թերթը գրում է.— Ոգոստոսի 26-ից Ապարան է ժամանել ժողովրդական արտիստ, Անգր-կենտգործկոմի կողմից շահնշանով պարգևատրված ընկ. Ամո-հարազյանն իր խմբով: Ապարանի կոլտնտեսականները բուռն խանդա-

վառությամբ ընդունեցին իրենց սիրելի ժողովրդական արտիստին իր հետուզիաստ խմբի հետ միասին: Խումբն իր ներկայացումներն է տվել Չամուր, Գյուլուջա, Մուլֆի և այլ գյուղերում:

ԳԻԼԻՋԱՆԻ «ՍՏԱԼԻՆՅԱՆ ԱՐՇԱՎ» թերթը գրում է.— Գիլիջան է յեկել Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ թատրոնը: Խումբը բեմադրեց «Հացի խնդիր»-ը: Պետք է մեծ գոհունակությամբ շեշտել, վոր դերակատարների կոլեկտիվը հարազատորեն դրսև-վորեց նահապետական կյանքի բոլոր կողմերը և այդ վարպետորեն դրսևվորումն էր, վոր հանգիստներին կողմից խումբն արժանանում էր բուռն ծափահարությունների:

ԳՈՐԻՍԻ «ԿՄՐՄԻՐ ԶԱՆԳԵՋՈՒՐ» թերթը գրում է.— Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ թատրոնը դեկավարությամբ ժողովրդական արտիստ ընկ. Ամո-հարազյանի, Գորիսի կոլտնտ գյուղում բեմադրեց «Գործազուրկին արգելված է սիրել» պիեսը: Պիեսի բեմադրությունն անցավ հաջող: Բեմական արվեստի բարձր կատարելությամբ լավագույն խաղ ցուցաբերեց Մելիի դերում ընկ. Աշխեն հարազյանը: Բոլոր դերակատարները բացառիկ կարգապահությամբ և մեծ կազմակերպչվածությամբ իրենց խաղով որինակ կժառայեն



«Ուսանողա-աշակերտական դրամատիկ խումբ»-ից 1917—18 թ. թ.

տեղիս կոլտնոգ թատրոնի դերասաններին և սիրողներին:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ «ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» թերթը գրում է.— Ընդամենն ութ ուր է և Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ թատրոնի ներկայացումները դիտել են վոչ միայն շրջ. կենտրոնի, այլև շրջանի մի շարք գյուղերի աշխատավորները: Շրջկենտրոնում արդեն բեմադրվել են

«Գործազուրկին արգելված է սիրել», «Հյուրանոցի տիրուհին», «Սեփականություն» և «Հացի խնդիր» պիեսները: Հայ Գյուղագյառի, Գյուլագարակի և Վարդաբլրի կոլտնտեսու-



«Ազատ կոլեկտիվ»-ից մի խումբ դերասաններ 1926—27 թ. թ.

թյուններում բեմադրվել են «Հսկա ուժ»-ը, իսկ Հորարձիում՝ «Տանջանքի կամերան»:

Նույն թերթը մի այլ հոդվածում գրում է.— Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ թատրոնը մեզ մոտ է: Նա մասսայական մեծ հետաքրքրություն է առաջ բերել Ստեփանավանի շրջանի խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում: Չե՞ վոր բոլորը նախում են իրենց Ամոյին ու խմբի անդամներին, սիրում են նրանց և շատ բան սովորում նրանցից:

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ «ՍՈՑԱԼՇԱՎ» թերթը գրում է.— Հայաստանի խորհրդային թատրոնի— արվեստի այդ կարևոր բնագավառում մեր ձեռք բերած վիթխարի նվաճումների գործում խոշոր ծառայություն է մատուցել ժողովրդական արտիստ Ամո-հարազյանը: Խարազյանին և նրա դեկավարած խմբին սիրում և հարգում են Հայաստանի աշխատավորներն անգամ ամենահեռավոր գյուղերում:

Պետական շրջիկ թատրոնն այս գնահատականները ձեռք է բերել իր նվիրված, ժրջան ու բարեխիղճ աշխատանքի շնորհիվ: Շրջանային թերթերի միջոցով խոսում է ինքը մեր ժողովուրդը, նա, վորին սպասարկելու և ոգնելու համար կոչված է Պետական շրջիկ թատրոնը:

Ամո-հարազյանի անվան շրջիկ թատրոնն ունի դերասանական շնորհալի և լավորակ ուժեր, վորոնք համակված իրենց աշխատանքով, մեծ սիրով ու խանդավառությամբ են սպասարկում մեր մասսաներին:

ԹՎԵՆՔ մի քանիսի անունները.

Պետական շրջիկ թատրոնի մշտական ու կարևոր ուժերից մեկն է դերասանուհի Աշխեն հարազյանը, վորն իր նվիրված աշխատանքի և ընդունակությունների շնորհիվ առաջ է քաշվել խմբի ռեժիսյորի պաշտոնում: Աշխեն հարազյանն իր բեմական աշխատանքների մեծ մասը (1916 թ.) անց է կացրել մասսայական թատրոններում և Հայաստանի խորհրդայնացման հենց առաջին որերից աշխատում է Հայաստանում: Մեծ է ընկ. Աշխեն հարազյանի դերը Պետական շրջիկ թատրոնի կազմակերպման գործում: Աշխեն հարազյանը միաժամանակ հասարակական լավ աշխատող է: Նրա լավագույն դերերն են՝ «Հալածվածներ»— Ֆենյա, «Բեկում»— Տատիանա, «Յերբորդ ամենա»—Վարյա, «Ցասում»—Մարգարիտ, «Ուրիել Ակոստա»— Հուդիթ և այլն: Պետական շրջիկ թատրոնի յերիտասարդ դերասանները շատ բան ունեն սովորելու և յուրացնելու իրենց ավագ ընկեր Աշխեն հարազյանից:

Պետական շրջիկ թատրոնի ժրջան և բարեխիղճ դերասաններիցն է ընկ. Վարյա Բեգիջանյանը, վորն այդ թատրոնում աշխատում



Վ. Վարդանյան «Պրոլետկուլտ»-ի նախագահ 1917 թ.

է 1927 թ-վից: Բեգիջանյանն իր բեմական գործունեությունը սկսել է 1905 թ. Թբիլիսիի մասսայական թատրոններում: Նա իր լավագույն աշխատանքների համար պարգևատրվել է: Նրա կատարած հաջող դերերն են՝ «Յերկու կյանք»—Սալբի, «Անհաշտ»-ը—Շողեր, «Յերբորդ ամենա»— Ակուլինա և այլն:

Յերիտասարդ դերասան Վրույր Փանյանը բատերական ասպարեզ է մտել արդյունաբերությունից: Պետական շրջիկ թատրոնում

րոնի ընդունակ, որինակելի դերասաններին ցուցաբերում խմբի կողմից տարվող հասարակական աշխատանքներում: Նա շրջիկ քատրոնում աշխատում է 1930 թ.: Նրա հաջողված դերերն են՝ «Ցասում» — Բարսեղ բիճա, «Անհաշտ» — Թաթիկյան, «Հացի խնդիր» — Հաֆուլ և այլն:

Համո-Եմինին նույնպես պատկանում է շրջիկ քատրոնի բարեխիղճ և ընդունակ յերկուսասարդ դերասանների շարքին: Նա գյուղական ինֆնագործ քատրոնների հին աշխատողներից մեկն է (1921 թ.), իսկ Պետական շրջիկ քատրոնում աշխատում է 1930 թվից: Նա որինակելի — հարվածային աշխատող է: Համո-Եմինին շատ լավ է «Մաֆառում» — ում Թաթոյի, «Ցասում» — ում Նիկիտ աղայի, «Անհաշտ» — ում — հաչագողյանի, «Հացի խնդիր» — ում — Սաֆոյի և այլ դերերում:



Վրատ. Բանդակագործ Արա Սարգսյանը Ամո-հարազյանի կիսանդրին Բանդակելիս:

Ամո-հարազյանի անվան Պետական շրջիկ քատրոնի դերասանները չեն սահմանափակվում վերև նշված մի քանի անուններով: Խմբի լավագույն անդամներից են նաև՝ Անահիտ Վոսկանյանը, Սեթ Հովսեփյանը, Միշա Սաֆարյանը, Սիրուշ Ասատրյանը, Գրիշա Պողոսյանը, Գուրգեն Զանոյանը, Աղասի կըլեկչյանը, Արտ. Խալաթյանը, Ժենյա Գևորգյանը, Վարդգես Սողոմոնյանը, Արամ Փափախչյանը, Մուկուշ Սարգսյանը, Նեպ Խառատյանը և ուրիշները, վորոնք վոչ մի ջանք չեն խնայում և իրենց աշխատանքով ոժանդակում են ու բարձրացնում Պետական շրջիկ քատրոնի խմբի աշխատանքի վորակը և դրանով իսկ շահում մեր աշխատավորության համակրանքը:

Պետական շրջիկ քատրոնը դեռևս խոշոր անելիքներ ունի Ստալինյան 3-րդ հնգամյակում — կոմունիստական հասարակարգի կերտման այս պատասխանատու շրջանում:

Մեր աշխատավորական մասսաները, մեր հարագատ կոմունիստական կուսակցությունը և բանվորա-գյուղացիական իշխանությունը տակավին խոշոր ակնկալություններ ունեն իրենց 10ամյա Պետական շրջիկ քատրոնից, վորն ամբողջովին անել ու զարգացել է ստալինյան հայրական հոգատարության պայմաններում:

Ամո-հարազյանն իր արգասավոր, ազնիվ ու անձնվեր աշխատանքի գնահատականը ստացավ միայն հորհրդային իշխանության որս՝ հորհուրդների մեծ յերկրում, վորտեղ զարգանում և բարգավաճում է ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական արվեստը:

Ամո-հարազյանը 1932 թ., Անդրկովկասյան Ֆեդերացիայի 10-ամյակի կապակցությամբ, ի տրիտուր իր տարած հանրագուտ ու բեղմնավոր աշխատանքի, Անդրկենտգործկումի կողմից պարգևատրվեց Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանով, իսկ 1933 թ. Հայաստանի կառավարությունը նրան շնորհեց հանրապետական ժողովրդական արտիստի բարձր կոչում և նրա հիմնադրած Պետական շրջիկ քատրոնն անվանեց նրա (Ամո-հարազյանի) անվամբ:

Ամո-հարազյանը Միութենական Գեղաշխի կենտկոմի կողմից իր տարած գինշեֆական աշխատանքների համար 1938 թվին պարգևատրվել է պատվոգրով, նույնպիսի պատվոգիր է նա ստացել նաև Անդրկովկասյան ազգ. շրջանի Ռազմ. հորհրդից:

Ներկայումս Ամո-հարազյանը Համամիութենական Գեղաշխի կենտկոմի և Հայկական ԽՍՀ Գեղաշխի նախագահության անդամ է:

Այժմ, Հայկական ԽՍՀ Ժողովրդական կոմիսարների հորհրդի վորոշմամբ ԺԿՍ-ին կից Արվեստի վարչությունը Ամո-հարազյանի բեմական և հասարակական գործունեության

40-ամյակը նշում է հորեյանական հատուկ հանդեսով, վորը նոր լիցքով ու ստեղծագործական աշխատանքի նոր յեռանդով պիտի լցնի մեր քրտնաջան հորեյարին ու համակի նրան սոցիալիստական արվեստի նորանոր նվաճումներ ձեռք բերելու ավելի ուժեղ ձգտումներով՝ մեր մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության համար:



Պետական շրջիկ քատրոնը Ղափանից Մեղրի գնալիս — 1929 թ.



Վաստ. ունժ. Լ. Բալանբար



Ժող. արտիստ Անու-Խարազյան



Վաստ. ունժ. Վ. Անեմյան



Աշխեն-Խարազյան



Տ. Շառիբյանյան



Ս. Քոչարյան

ՌԵԺԻՍՑՈՐՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԲԵՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԱՄՈՒ-ԽԱՐԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏ. ՇՐՋԻԿ ԹԱՏՐՈՆՈՒՄ:



Նկարիչ Ա. Բարյան



Տ. Սաֆարյան



Անու-Խարազյանի անվան Պետական շրջիկ քաարոնի կոլեկտիվը



ՀԵՍՀ վաստ. դերասանուհի
Աշխեն-Խարազյան



ՀԵՍՀ վաստ. դերասանուհի
Վ. Բեգիջանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԻՒ ԳՆՏՎՈՒՐՈՎ ԳՐԵԳՆԵՎԱՏՐՎԱԾՆԵՐ



Մ. Սափարյան



Անահիտ Վասիլանյան



Վ. Փանոյան



Հ. Եմինի

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼ



Ս. Հովսեփյան



Ս. Ասատրյան



Ա. Խալաթյան



Գ. Զանոյան



Գ. Պողոսյան



Վ. Սողոմոնյան



Ք. Գեվորգյան



Ա. Կրեկյան



Հ. Մալարյան



Ա. Փափախչյան



Մ. Սարգսյան



Ս. Մելիկյան



Մ. Գեվորգյան



Ն. Խարատյան



Ս. Ռիանյան



Ա. Փիլոյան



Ս. Հովհաննիսյան

ՍՊԱՍԱՐԿՈՒ ՊԵՆՍ ՈՆԱԼ



Ի. Ելմասյան (մաշինիստ)



Հ. Չաղրչյան (ղեկորատու)



Տ. Սարգսյան (հանդերձապահ)



Գ. Ասիկյան (ավ. շոֆեր)

32248-67





«Փոստակայանի տեսուչը»



«Պատիվ»



«Աննեյ մեղավորներ»



«Աննեյ մեղավորներ»



«Գործազուրկին արգելվում է սիրել»



«Աննեյ մեղավորներ»




Յագոր— Ամն-խարազյան Սարգիստ.— Ս. Հովսեփյան




«Սեփականություն»



«Փոքորկածիներ» — Ռայելիսի



Իլյուստրացիա «Ճատում»-ից—նկ. Ա. Բարյան



Իլյուստրացիա «Ուրիշի յերեսան» — նկ. Ա. Բարյան



2001

Գլավիճտի լիազոր Վ. — 2108 Պատվեր 538. Տիրաժ 700

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի փ., № 65

A. 1939 Դ.
ԱՌՏ № 169

«Ազգային գրադարան»



NL0124830

11 ИЮН. 1939

294

|| Арм
5-6

291
9112

АМО-ХАРАЗЯН
И ТЕАТР ЕГО ИМЕНИ
Арм. ССР, Ереван, 1939 г.

